

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ,

ԻՄ ԱՆՈՒԾ

ՔԱՂԱՔ

Չէ, չեմ հաղատում աչքերիս, դու միշտ կանաչ էիր, պայծառ մի պուրակ, որին կնախանձեին աշխարհի շատ քաղաքներ:

Քանի՜-քանի անգամ տարբեր լեզուներով հրատարակություններում Ստեփանակերտը ներկայացվում էր որպես աճող, բարգավաճող մի քաղաք, որն օրեցօր գեղեցկանում էր, իր թևերը փռելով դեպի մերձակա Խնածախ, Քարաշեն և մյուս հայկական գյուղերը:

Ստեփանակերտի գեղեցկությունն ամենից առաջ արտահայտվում է մարդկանցով: Մարդիկ են քաղաքին դեմք տվողը: Այստեղ՝ Ստեփանակերտում, բոլորը կարծես մի ընտանիքի անդամներ լինեն, բոլորը գիտեն իրար, պատշաճ հարգանք տածելով իրար նկատմամբ: Ո՞վ չէր ճանաչում, օրինակ, Արտեմ Հայրապետովիչին (բանաստեղծ Միքայել Հարությունյանի հայրը), որը երեսուն տարի դեկավարում էր Ստեփանակերտի ավտոկայանը, բոլորը գիտեին ընկեր Հրանտին (քաղաքի թիվ մեկ դպրոցի տնօրեն Հրանտ Շահրամանյանն էր), Մուխան Իրիգորյանին (քաղաքի հիմնադրող և խնամակալ էր, այժմ՝ թոշակատու), Մամիկոն Խաչյանին (մարզային ֆինանսական բաժնի վարիչն էր), Ռուբենին (չարքաշ բանվոր էր, շատ ժամանակ՝ ուղղակի բեռնակիր), բժիշկ Վարդան Արկադևիչին (մեզ հայտնի Բորիս Դադամյանի հայրը) և շատ-շատերին, որոնք մարդկային անհատականություններ են, տոգորված ամենապաճառույն հատկություններով:

Հիրավի, քաղաքին շքեղություն տվողը մարդն է, բնակիչը: Եվ ինչպիսի՜ ըսքանչելի ավանդություններ ունի Ստեփանակերտը՝ իրար թիկունք կանգնել, ոչինչ չգողանալ իրարից, հարևանին չվիրավորել, սատը խոսք չասել, իրար հանդիպելիս փոխանակել արցախյան մեղմ ժպիտը, հարևանություն անել եղբոր, քրոջ նման, համոտես անել հարևանի համով պատրաստած կերակուրը: Այո, Ստեփանակերտը հպարտանալու շատ բան ունի: Այս փոքրիկ քաղաքն իր ժողովրդին պարգևավել է շատ ու շատ մեծանուն մարդիկ, որոնցից յուրաքանչյուրը կարող է պատիվ բերել յուրաքանչյուր ժողովրդի:

Այստեղ, այս քաղաքը ոտք են դրել շատ երևելի մարդիկ, որոնց անունը երբեք չի խամրի մեր պատմության էջերում: Հիշում եմ, 1943 թվականի աշնանն էր... Վերադարձել էի ռազմաճակատից ու նորից աշխատանքի նշանակվել իմ սիրած թերթի խմբագրությունում: Այդ օրերին Արցախի մայրաքաղաք էր ժամանել Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնի դերասանների սերուցքը՝ Վ. Փափազյան, Հ. Ներսիսյան, Վ. Վաղարշյան, Դ. Մալյան, Ա. Ավետիսյան... Մարզային թերթի գրեթե յուրաքանչյուր համարում տալիս էինք թատերախոսություն «Համկետ»-ի, «Օթեյլո»-ի, «Ավազակների», «Պեյո»-ի և մյուս բեմադրությունների առթիվ: Եվ, ահա, Վ. Վաղարշյանը մի օր ինձ կանչեց թատրոն (հագիս գինվորական շինել էր) և սկսեց գրույց-հարցուփորձը.

— Այ տղա, դու կիմանաս, ինչո՞ւ է Ստեփանակերտն այսքան գեղեցիկ, հարազատ, քաղցր:

Ես դարաբաղցու համարձակությամբ պատասխանեցի.

— Վարպետ, Ձեր հայրենիքն է Արցախը, ինչքան գիտեմ, Դուք ծնվել եք այստեղ և Ձեր գրած առաջին պիեսը հենց արցախյան բաբրատով է: Ինչպե՞ս կարող է ծննդավայրը քաղցր չլինել...

Հրաշյա Նարսիսյանը, որ ունկնդրում էր



մեր գրույցին, առաջարկեց գրոսնել «Երեք ծորակի» մոտակայքում (մեր բնակարանն այդտեղ էր): Ստեփանակերտցիները, հմայված կամ կանգնում-նայում էին վարպետներին, կամ ուղղակի ակնածանքով քայլում էին նրանց ետևից: Ստեփանակերտին այդ օրերին մի առանձին հմայք էր հաղորդում Դավիթ Մալյանը, որի քույրը քաղաքի մշտական բնակիչն էր: Նա սիրում էր իր նման քոյով և գեղեցիկ քրոջ հետ քայլել Ստեփանակերտի ամենագեղեցիկ պուրակում, որը հենց մայրաքաղաքի դարպասն է՝ հարավ-արևելքից: Այո, Ստեփանակերտը շատ ու շատ տաղանդավոր մարդկանց և՛ ծննդավայրն էր, և՛ հավաքատեղին:

Հայոց երիտասարդ քաղաքն իր իսկ որդիների քանքարով մեծանում էր Ժամերով: Այն վերածվել էր շինարարական հրապարակի. չէին դադարում քարտաշների մուրճերի զրնգոցը, ցեխ ու ավազ, քար ու ցեմենտ կրող մեքենաների հոնդյունը... Կարճ ժամանակում վեր խոյացան թատրոնի, գրադարանի, տպարանի, խմբագրության, առևտրի տան, դպրոցական նոր շենքերը, ձևավորվեց, կառուցապատվեց Մայր-Նովայի անվան երաժշտական ու սուսմարանի դիմացի պուրակը, ուր հավաքվում էին հին ստեփանակերտցիները հուշեր պատմում անցած-գնացած օրերի մասին: Եվ երբ քայլում էի Ստեփանակերտի փողոցներով, պուրակներով, սիրտըս լցվում էր անհուն բերկրանքով. մի կողմից՝ մարդկային աշխույժ եռուզեղ, մյուս կողմից՝ գույնզգույն ծաղիկների աճուշ բուրմունքը:

Ստեփանակերտի յուրաքանչյուր քարը, շենքը, տունը մի-մի պատմություն են կարված որևէ իրադարձության հետ: Սակայն այդ աննման քաղաքը Շուշիի ագերիների կողմից փլատակվել է, կրակի բաժին դարձել: Չէ, չեմ հավատում, որ Ստեփանակերտը գրկվել է «Երեք ծորակից», փոստի շենքից, հանրախանութից, Կիրովի փողոցի վրա վերջերս վեր խոյացած 9 հարկանի բնակելի հսկայից:

Այսօրվա Ստեփանակերտը իմ տեսածը չէ: Ո՞ր են մեր դպրոցական շենքերը, ո՞ր է իմ սիրելի Հրանտի դպրոցը, որի մերձակայքում էին «Վարաբաղ» հյուրանոցը, ռեստորանը, բնակելի հոյակապ շենքերը:

Ստեփանակերտ, իմ անուշ քաղաք, այս ի՞նչ օրի ես: Բայց մի նախազգացում ինձ հուշում էր՝ երկար չի շարունակվի այդ դժոխային վիճակը: Համոզված էի՝ սոխիքներից նորից կհատնես, նորից քո լույսերը կճառագեն ամեն մի տան մեջ, փողոցներում, պուրակներում: Հիմա, երբ մեր արծիվ տղաները թշնամուց ետ են լայել հայոց Շուշին, դու ազատ շունչ կքաշես, իմ Ստեփանակերտ, հայ շինարարի քանքարով կվերստանաս քո ն... անուն հմայքը:

Սմբատ ԱՎԱԳՅԱՆ
Պրոֆեսոր